Հինգշաբթի
14 սեպտեմբերի 2023թ.
№ 15 (603)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Սամվել Շահրամանյանը՝ Արցախի Հանրապետության նախագահ

Սեպտեմբերի 10-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովում հրավիրվել է հատուկ նիստ՝ նվիրված ԱՀ նորընտիր նախագահ Սամվել Շահրամանյանի պաշտոնամուտի արարողությանը:
Նիստին մասնակցում էր 30 պատգամավոր:
Նորընտիր նախագահը երդվել է Սահմանադրությամբ և 17-րդ դարի Ավետարանի վրա: Հնչել է Արցախի Հանրապետության պետական օրհներգը:
Այնուհետև օրհնանքի խոսք է ասել Տեր Մինաս քահանա Մովսիսյանը:
Սամվել Շահրամանյանին խորհրդարանի անունից շնորհավորել է ԱԺ փոխնախագահի պաշտոնակատար Գագիկ Բաղունցը:
Ներկա էին Արցախի Հանրապետության երեք նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանը, գործադիր իշխանության ներկայացուցիչներ:

Մեկ տարի առաջ՝ այս օրերին, ծանր մարտեր էին ընթանում Սյունիքի հյուսիսային և հարավարևելյան սահմանի երկայնքով

2022 թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 00:05-ից, Ադրբեջանը Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի դեմ ագրեսիա է ձեռնարկել արևելյան սահմանի ամբողջ երկարությամբ:

Թշնամու ՁՈՒ ստորաբաժանումները հրետանային միջոցներից, խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել են ինտենսիվ կրակ վարել Գորիսի, Կապանի, Սոթքի, Ջերմուկի, Արտանիշի և Իշխանասարի ուղղությամբ՝ կիրառելով նաև ԱԹՍ-ներ, որոշ ուղղություններով ձեռնարկել դիրքային առաջխաղացման գործողություններ:

Ադրբեջանի զինված ուժերը, կոպտորեն խախտելով 1949 թ. ժնևի կոնվենցիայի պահանջները, կիրառելով ականանետային-հրթիռահրետանային միջոցներ, անօդաչու թռչող սարքեր, կանխամտածված և նպատակաուղղված հարձակման թիրախ էին դարձրել խորը թիկունքում գտնվող քաղաքացիական օբյեկտները և ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող քաղաքացիական բնակչությանը: Մասնավորապես՝ հարձակման օբյեկտ են դարձել Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի բնակավայրերը, Կապան-Ճակատեն ավտոճանապարհը:

Ռազմական գործողությունների սկզբից՝ հակառակորդի դեմ վարելով դիրքային մարտեր, ՀՀ ՁՈՒ ստորաբաժանումները հետ էին մղում հակառակորդի գերակշռող ուժերի հարձակումները:

Այդուհանդերձ հայկական կողմը կորցրեց տասնյակ հեկտարներով տարածք, ինչպես նաև բազմաթիվ բնակավայրերում ունեցավ բնակֆոնդի ու ենթակառուցվածքների ավերածություններ:

Կորցրել ենք նաև որոշ մարտական դիրքեր, որն էլ հիմք է հանդիսացել, որ հակառակորդը կարողանա իր հարյուրավոր ու ավելի մեծ քանակությամբ ստորաբաժանումներով ներթափանցել մեր պաշտպանության խորքը:

Որոշ ուղղություններում՝ մեր ստորաբաժանումների ակտիվ գործողությունների շնորհիվ, ինչպես Ջերմուկի ուղղությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետության հարավարևելյան, արևելյան մյուս հատվածներում հաջողվեց հակառակորդին հետ շպրտել ելման դիրքեր:

Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանի հայտարարության համաձայն՝ *«Ջերմուկի ուղղությամբ հակառակորդի ներթափանցման խորությունը, ինչպես նաև ճակատը կազմում է 8-8.5 կմ, մյուս հինգ ուղղություններում հակառակորդի ստորաբաժանումների հաջողությունները չի կարող համեմատվել Ջերմուկի ուղղությամբ նրանց մխրճման խորության հետ: Ներքին Հանդի և Շորժայի ուղղությամբ հակառակորդը մխրճվել է 1-1.5 կմ, Իշխանասարի ուղղությամբ՝ 0.5 կմ խորությամբ: Մյուս հատվածներում հաջողվել է հակառակորդին հետ շպրտել»:*

Ռազմական գործողությունների հետևանքով հայկական կողմի մարդկային (պաշտոնական) կորուստներն են՝ 207 զոհ, ավելի քան 20 գերեվարված և 293 վիրավոր:

Ռազմական գործողությունների հետևանքով ադրբեջանական կողմի մարդկային (պաշտոնական) կորուստներն են՝ 79 զոհ և 282 վիրավոր:

...Վայ հա՛յ ժողովրդին, որ ներգրավվեց Եվրոպական քաղաքականության մեջ:

Ֆրիտյոֆ Նանսեն

Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի շնորհավորական խոսքը ԱՀ նորընտիր նախագահ Սամվել Շահրամանյանին

Ածարգո Տիար Շահրամանյան,

Հանուն Արցախի թեմի հոգևոր դասի և հավատավոր մեր ժողովրդի, մեր անկեղծ շնորհավորանքներն ենք բերում Ձեզ՝ Արցախի Հանրապետության նախագահի պատասխանատու պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Արցախի համար փորձություններով և տեսանելի խոչընդոտներով լի այս ժամանակաշրջանում Ձեր վրա են սևեռված բոլոր արցախցիների հայացքները, ովքեր հույսով սպասում են կամավորաբար հանձն առած իրենց նեղությունների ու զրկանքների դրական հանգուցալուծմանը: Իրապես ծանր է լուծը, բայց քրիստոնյայի համար ցանկացած լուծ դառնում է քաղցր և տանելի, եթե այն կրում է սիրով ու հանուն սրբազան գաղափարի:

Քաջատեղյակ լինելով Ձեր նախընթաց ճանապարհին և Արցախի պետականաշինության գործում ունեցած մեծ ավանդին, համոզված ենք, որ միևնույն նախանձախնդրությամբ պիտի շարունակեք ծառայել մեր ժողովրդին նաև այս նոր պաշտոնում: Արդեն 32 տարի է, ինչ արցախցիները կանգնած են հայ ժողովրդի գոյության և արժանապատվության պայքարի առաջնագծում և բազում զրկանքներ ու տառապանքներ են կրել ու դեռ շարունակում են կրել: Բազմավաստակ մեր ժողովուրդն այսօր ամեն ինչից առավել կարիք ունի սիրո և անկեղծության, և առաջին հերթին՝ իր երկրի ղեկավարների կողմից: Արցախի քաղաքական դաշտում առկա համերաշխության և միասնականության մթնոլորտը պետք է դառնա մեր պայքարի ամուր հիմքը և ողջ հայության համախմբման շարժիչ ուժը:

Ուստի այսօր մենք ուժից ու համարձակությունից ավելի՝ կարիք ունենք իմաստության, որովհետև առանց իմաստության ամեն ինչ կարող է փոխարկվել չարիքի: Սուրբ Գիրքը մեզ ուսուցանում է, որ կատարյալ իմաստության սկիզբը Աստծո հանդեպ ունեցած երկյուղն է: Առ Աստված ամուր հավատքը և մաքուր խիղճը ամուր պարիսպ են յուրաքանչյուր մարդու և ազգի համար: *«Եթե Աստված չշինի տունը, զուր են աշխատում այն շինողները, եթե Տերը չպահպանի քաղաքը, զուր տեղն են հսկում պահապանները»* (Սաղմոս 127:1): 127-րդ սաղմոսի այս գեղեցիկ տողերից ներշնչված՝ *աղոթում ենք, որ դուք կարողանաք իմաստությամբ և խոհեմությամբ թեթևացնել մեր երկրի հոգսը, ապահովել արցախահայության խաղաղ կյանքը իր աստվածապարգև հայրենիքում:*

Աստված օրհնի Ձեր նոր առաքելությունը:

Օրհնությամբ՝

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ՎՐԹԱՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
10.09.202

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ.

«Մենք առաջարկել ենք տարբերակ, որով Ղարաբաղը և երկու շրջանները մնան Հայաստանի իրավասության ներքո»

Մենք առաջարկել ենք կարգավորման տարբերակ, որով Ղարաբաղը, Քելբաջարի և Լաչինի շրջանները մնում էին Հայաստանի իրավասության ներքո:

Այս մասին Վլադիվոստոկում՝ Արեւելյան տնտեսական ֆորումի լիագումար նիստում, հայտարարել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը:

Պատասխանելով «Հայաստանի շրջադարձի» մասին հարցին՝ ՌԴ ղեկավարը նշել է.

«Չեմ կարծում, որ կա ինչ-որ շրջադարձ. մենք տեսնում և հասկանում ենք, թե ինչ է կատարվում: Այս մասին շատ բան կա ասելու: Մենք առաջարկել ենք մեր կարգավորման տարբերակները, սա հայտնի է: Հայաստանը վերահսկում էր յոթ շրջան, որոնք իր վերահսկողության տակ էր պահում հայ-ադրբեջանական հայտնի հակամարտությունից հետո:

Մենք առաջարկել ենք Ադրբեջանի հետ համաձայնության գալ այնպես, որ երկու շրջանները՝ Քելբաջարն ու Լաչինը, նաեւ ամբողջ Ղարաբաղը, փաստացի մնան Հայաստանի իրավասության ներքո: Բայց Հայաստանի ղեկավարությունը սրա հետ չհամաձայնեց, թեև մենք 10 կամ 15 տարի փորձում էինք համոզել Հայաստանի ղեկավարությանը: Տարբեր տարբերակներ, բայց ի վերջո ամեն ինչ հանգում էր դրան:

Մեր հարցին՝ ի՞նչ եք անելու, մեզ պատասխանում էին՝ պայքարելու ենք: Ի վերջո, ամեն ինչ հասավ այն իրավիճակին, որն այժմ ձևավորվել է: Բայց խոսքը միայն վերջին հակամարտության արդյունքների մասին չէ: Բանն այն է, որ Հայաստանի ղեկավարությունը, ըստ էության, ճանաչեց Ադրբեջանի ինքնիշխանությունը Ղարաբաղի նկատմամբ»,– գրում է infoport.am-ը:

12.09.2023

Նորից պատերազմի ուրվականն է շրջում...



Ադրբեջանն օրեր շարունակ զորքեր է կուտակում Արցախի հետ շփման գծին և Հայաստան-Ադրբեջան սահմանագծի երկայնքով:

Ադրբեջանական մամուլում և քարոզչական հարթակներում ավելի է ահագնացել հակահայկական ատելության հռետորաբանությունը:

Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ոտնձգությունների քաղաքականությունը շարունակվում է:

Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության դեմ ռազմական նոր սադրանք ձեռնարկելու իր մտադրությունը հիմնավորելու համար Ադրբեջանն անընդհատ շրջանառության մեջ է դնում կեղծ և իրականությանը չհամապատասխանող թեզեր:

Հայաստանն ակնկալում է, որ միջազգային հանրությունը, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի երկրները լրջագույն միջոցներ կձեռնարկեն նոր պայթյունը կանխելու համար:

Իսկ միգուցե ժամանակն է, որ հույսներս նախևառաջ մեզ վրա դնենք և Ադրբեջանի հետ սկսենք խոսել իրենց իսկ հասկանալի լեզվով... Կա՞ շաբաթ, որ զոհ չունենանք սահմանին. մի՞թե այդքանը տեսնելուց հետո էլ խաղաղություն պիտի մուրանք ֆաշիստական Ադրբեջանից, որը Հայաստանի հանդեպ իր տարածքային հավակնությունները չի թաքցնում, որը չի կատարում 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները: //

ՀՀ-ում մեկնարկեցին «EAGLE PARTNER 2023» հայ-ամերիկյան զորավարժությունները

Միջազգային խաղաղապահ առաքելություններում մասնակցության նախապատրաստման շրջանակում սեպտեմբերի 11-ին ՊՆ խաղաղապահ բրիգադի «Զառ» ուսումնական կենտրոնում ազդարարվեց «Արծիվ գործընկեր-2023» հայ-ամերիկյան զորավարժության մեկնարկը:

Զորավարժության օրերին կխաղարկվի հակամարտող կողմերի միջև կայունացման ապահովման գործողություններ՝ խաղաղապահ առաջադրանքների կատարմամբ:

Զորավարժության նպատակն է բարձրացնել միջազգային խաղաղապահ առաքելությունների մասնակցող ստորաբաժանման փոխգործակցելիության մակարդակը խաղաղապահ գործողությունների շրջանակում, իրականացնել կառավարման և մարտավարական հաղորդակցման լավագույն փորձի փոխանակում, ինչպես նաև բարձրացնել հայկական ստորաբաժանման պատրաստվածությունը՝ ՆԱՏՕ/ԳՀԽ «Օպերատիվ կարողությունների հայեցակարգ»-ի պլանային գնահատման համար:

//

Ադրբեջանը նորից դրժել է պայմանավորվածությունը. նախօրեին համաձայնել էր Լաչինի և Աղդամի ճանապարհների միաժամանակյա օգտագործմանը

Ակնա-Ստեփանակերտ երթուղով մեկ բեռնատար ռուսական մարդասիրական օգնության փոխադրումից գրեթե երկու օր անց դեռ փակ է Լաչինի միջանցքը: Ամենաանհրաժեշտ հումանիտար օգնությամբ տասնյակ բեռնատարներ շարունակում են մնալ Սյունիքում:

Ստեփանակերտից ավելի վաղ հայտնել էին՝ որոշել են թույլ տալ Ասկերան քաղաքով ռուսական բեռների մուտքը, միաժամանակ պայմանավորվելով, որ Լաչինի միջանցքով վերականգնվելու են հումանիտար բեռնափոխադրումները ռուս խաղաղապահների ու Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից:

Ինչո՞ւ մինչ այս պահը չի բացվել Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը, Ստեփանակերտից դեռ չեն մեկնաբանում...

Մինչդեռ Բաքուն՝ Լաչինի միջանցքը վերաբացելու մասին պայմանավորվածությանն անդրադառնալով, հայտարարել է, թե ռուսական բեռի մուտքը Ստեփանակերտ առանձին պայմանավորվածություն է, պետք չէ շփոթել Աղդամն ու Լաչինը միաժամանակ բացելու առաջարկի հետ:

Որ միջանցքը պետք է բաց լինի՝ նախ՝ 2020 թ. եռակողմ պայմանավորվածությամբ է ամրագրված, սակայն Ադրբեջանը խախտում է նաև այդ կետը: Նույն կերպ խախտում է Աղդամի ճանապարհին օգտագործելուց հետո Լաչինի միջանցքի բացման պայմանավորվածությունը:

//

Հարցազրույց Մեղրիի համայնքապետ Բագրատ Զաքարյանի հետ

Սեպտեմբերի 5-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը Մեղրիում էր: Այցելության նպատակն էր ծանոթանալ ոռոգման համակարգի գործունեությանը՝ նկատի ունենալով հանգամանքը, որ օգոստոս-սեպտեմբերը ոռոգման ամենածանր շրջանն է՝ պայմանավորված նաև ջրի սակավությամբ:

Այդ օրը բազմաթիվ հանդիպումներ ունեցանք տարածաշրջանի գյուղերում, այցելեցինք պոմպակայաններ ու այգիներ:

Հանդիպեցինք նաև Մեղրի համայնքի ղեկավար Բագրատ Զաքարյանին: Նրա հետ մեր զրույցի թեման, բնականաբար, ոռոգման սեզոնին առնչվող հարցերի ամբողջությունն էր:

– Պարոն Զաքարյան, այսօր եղել ենք համայնքի մի շարք վայրերում, ծանոթացել ոռոգման համակարգի աշխատանքներին, զրույց ունեցել «Սյունիք» ՋՕ ընկերության պատասխանատուների հետ: Հիմա կուզենայինք Ձեր գնահատականը լսել՝ Մեղրու տարածաշրջանում ոռոգման համակարգի ներկա վիճակի վերաբերյալ:

– Երբ 2021 թ. նոյեմբերի 15-ին ստանձնեցի Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնը, սկսեցի ավելի խորը ուսումնասիրել ջրային ռեսուրսների կառավարման վիճակը մեր տարածաշրջանում: Ու տեսա, որ լուրջ խնդիրներ ունենք կառավարման ոլորտում: Մտահոգիչ էր նաև ջրավազանների վիճակը, որտեղ Արաքս գետից ջուր պետք է մղվի: Չկար մեկ ջրավազան, որ բերնեբերան լցված չլիներ տիղմով, որոշ ջրավազաններում նույնիսկ ծառեր էին աճել, 3-4 տարվա ծառեր էին: Չեմ չափազանցում, լուսանկարները կան: Դա նշանակում էր, որ նախորդ 2-3 տարում ջրավազանները չեն մաքրվել:

Պոմպերի 70-80 տոկոսն էլ չէր աշխատում, այգիները չորացման լուրջ սպառնալիքի առաջ էին կանգնած: Առկա խնդիրների մասին տեղյակ պահեցինք ՋՕԸ-ի ղեկավարությանը:

2022 թվականին համայնքապետարանի և ՋՕԸ-ի համատեղ ուժերով կատարվեցին մաքրման աշխատանքներ:

Մեկ ուրիշ հարցի վրա եմ Ձեր ուշադրությունը հրավիրում. չորս ամիս առաջ Կարմիր խաչի միջոցով կարողացել ենք ձեռք բերել երկու նոր պոմպ: Եվ մինչև այսօր տեղադրվել է միայն մեկը, այն էլ՝ մեր ուժերով: Մենք տեղադրեցինք, միացումները կատարեցին ՋՕԸ-ի աշխատակիցները: Մյուս պոմպն առայսօր պահեստում է և չի տեղադրվում: Երբ հարցնում ենք՝ ինչո՞ւ չեք տեղադրում, այնքան պատճառներ են բերում...

– Ո՞ր պոմպերի մասին է խոսքը:

– Նռնաձորում գտնվող՝ Կարմիր խաչի կողմից տրամադրված պոմպի մասին, որ ՋՕԸ-ի պահեստում է: Այդ մասին բարձրաձայնել եմ նույնիսկ վարչապետի՝ Մեղրի կատարած վերջին այցի ժամանակ, երբ մանկապարտեզի մոտ զրուցում էր մեղրեցիների հետ:

Վարչապետին բոլորը խաբում էին, թե պոմպը տեղադրված է և աշխատում է, իսկ համայնքի ղեկավարը չի տիրապետում իրավիճակին: Ես առաջարկեցի՝ եթե տեղադրված է՝ բոլորիդ հրավիրում եմ տեսնելու, բայց դրական պատասխան չհաջորդեց:

Հիմա էլ Ձեզ եմ հրավիրում՝ գնանք ու տեսնենք՝ երկրորդ պոմպը տեղադրվա՞ծ է, թե՞ ոչ: Թող պարզաբանեն՝ ինչո՞ւ չեն տեղադրում Կարմիր խաչի կողմից Նռնաձոր հասցված պոմպը, որը (օգտագործելու դեպքում) էապես կբարելավեր բնակչության սպասարկման մակարդակը:

Նմանատիպ ուրիշ հարցեր էլ կան, որոնց մասով վերջերս դիմել եմ Սյունիքի մարզպետին: Երեք օր առաջ ինձ են ուղարկել «Սյունիք» ՋՕԸ-ի գործադիր տնօրեն Նաիրի Հովհաննիսյանի պատասխանը, որում մասնավորապես գրված է. «Հայտնում եմ Ձեզ, որ Մեղրի համայնքի Նռնաձոր, Ալվանք, Շվանիձոր բնակավայրերում, Մեղրի և Ագարակ քաղաքներում ջրօգտագործողները չունեն ոռոգման խնդիր: «Նռնաձոր-2» պոմպակայանում տեղադրվել է նոր պոմպ, որը հին պոմպի հետ անխափան աշխատում է: Ինչ վերաբերում է պոմպերի և շարժիչների խափանմանը, ապա դրանց մաշվածության պատճառով առաջանում են խնդիրներ, որոնք (շնորհիվ «Սյունիք» ՋՕ ընկերության բարեխիղճ աշխատանքի) արագ կարգաբերվում են»:

– Դուք, ինչպես երևում է, կասկածի տակ եք առնում այդ պատասխանի հավաստիությունը:

– Իհարկե, պատասխանը չի համապատասխանում իրականությանը, կարող եք հարցնել քաղաքացիներից: Մտեք այգիներ և բազմաթիվ տեղերում խորը աշնան տպավորություն կստանաք՝ տերևաթափ, թառամած ծառեր և գետնին թափված միրգ:

Օգոստոսի 18-ին Արաքսաշեն թաղամասից՝ մոտ 50 հոգի, եկել էին Մեղրի, ջրի պատճառով միջպետական ճանապարհին էին ուզում փակել: Խնդրել եմ, որ նման քայլի չդիմեն:

– Բայց, որքան տեղյակ ենք, Արաքսաշենի սպասարկումը «Սյունիք» ՋՕԸ-ի գործառույթների տիրույթում չէ:

– Մարդիկ ասում են՝ տվեք ջուր և մենք կվճարենք...

Լավ, Արաքսաշեն թաղամասը մի կողմ դնենք: Խոսենք «Շեբզավոդի» ձոր կոչվող տեղամասի մասին... Ո՞ւմ եք ուզում՝ զանգահարեմ և հարցնեմ՝ ջուր ստանո՞ւմ եք, թե՞ ոչ: Թզի ծառը, որպես քիչ ջուր սիրող ծառ, տերևաթափ է եղել, իսկ թուզը ծառի վրա չորանում է ու թափվում: Խնդրեմ, հենց հիմա կարող ենք գնալ Խճաքարի գործարանի տարածք, և ինքներդ կտեսնեք...

– Արդյո՞ք նման պատկերը պայմանավորված է սակավաջրությամբ, Արաքս գետի սակավաջրությամբ:

– Արաքս գետի վիճակով չէ պայմանավորված հիմնախնդիրը, գետում նորմալ ջուր կա: Իհարկե, լինում են օրեր, երբ Նախիջևանում ջրերի մի մասն ուղղում են իրենց ջրամբարներ...

– Ալեքսան Հովհաննիսյանը, օրինակ, ասաց՝ մեկ օրվա մեջ 35 սմ-ով իջել է Արաքսի ջրի մակարդակը:

– Չեմ բացառում, բայց իրենք պարտավոր էին ժամանակին ռիսկերը գնահատել և պատրաստ լինել՝ խողովակներն արագ իջեցնելու և հարմարեցնելու գետի մակարդակին: Իրենք մասնագետներ են և պետությունից աշխատավարձ են ստանում: Գյուղերի բնակիչներն էլ միշտ օգնում են նրանց, մենք նույնպես աջակցում ենք: Չկա հարց, որ ՋՕԸ-ի պատասխանատուները բարձրացնեն մեր առջև և մենք դրականորեն չարձագանքենք:

– Այսինքն՝ պատշաճ համագործակցություն կա՞ համայնքապետարանի և «Սյունիք» ՋՕԸ-ի Մեղրու կառույցի միջև:

– ՋՕԸ-ի հետ մշտական կապի մեջ ենք...

Ոռոգման համակարգի արդյունավետ գործունեությունը մեզ համար կարևոր է մեկ այլ տեսակետից նույնպես: Ոռոգման ջրի կանոնավոր մատակարարմամբ է պայմանավորված քահրիզներից խմելու ջուր ստանալը Նռնաձորում, Ալվանքում, Շվանիձորում: Երբ ՋՕԸ-ն իր աշխատանքները նորմալ կատարի՝ այդ գյուղերում կստանանք նաև նորմալ խմելու ջուր:

– Շվանիձորում հետաքրքիր հանդիպման մասնակից եղանք, գյուղացիները գնահատանքի խոսք էին հնչեցնում պոմպակայանի աշխատակից Մանվել Առաքելյանի հասցեին՝ նշելով, որ նրա խելամիտ գործունեության շնորհիվ գյուղում այս տարի վիճակն էականորեն բարելավվել է: Այդ օրինակը ևս մեկ անգամ ցույց է տալիս՝ ոռոգման գործի արդյունավետ կազմակերպումը նախևառաջ մարդկային-կադրային գործոնով է պայմանավորված:

– Այո, Շվանիձորում վիճակն այս տարի համեմատաբար լավ է, բայց դա չի նշանակում, որ խնդիրը հիմնովին լուծվել է: Հենց ՋՕԸ-ի ոչ բավարար աշխատանքի հետևանքով է, որ Շվանիձորում խմելու ջրի խնդիրն այդպես սրվել է այս օրերին:

– Ոռոգման համակարգի ներքին ցանցում էլ խնդիրներ կան, որոնց հետևանքով ջրի մեծ կորուստներ ենք ունենում. այդ հանգամանքը գյուղացիները մեզ փոխանցեցին: Ունե՞ք ծրագրեր ներքին ցանցի բարելավման ուղղությամբ:

– Մոտ 80-90 տոկոսով ներքին ցանցը գտնվում է նորմալ վիճակում: Մնացած մասում խնդիրներ ունենք, ընթացքում էլ հարցեր են առաջանում, և լուծում ենք ծագող հարցերը: Դեռևս գարնանը մենք ասացինք՝ ի՞նչ օգնություն է պետք համայնքապետարանից, որպեսզի Նռնաձորում, օրինակ, որևէ խնդիր չլինի ոռոգման սեզոնի ընթացքում: Բարձրացված բոլոր հարցերին դրական ընթացք տվեցինք, բայց... ֆեյսբուքյան հարթակում մեկ լուսանկար տարածելով փորձում էին տպավորություն ստեղծել, թե գարնան նախապատրաստական աշխատանքները լավագույնս են կատարվել: Իսկ Դուք՝ ինքներդ, փորձեք ճշտել՝ նախապատրաստական ի՞նչ աշխատանքներ են կատարվել Մեղրու տարածաշրջանում այս տարեսկզբին: Փորձեք ճշտել՝ որքա՞ն գումար է հատկացվել Մեղրու տարածաշրջանում գարնան նախապատրաստական աշխատանքների նպատակով և կոնկրետ (հասցեական) ի՞նչ հարցեր են լուծվել: Մենք մեզանից կախվածն անում ենք, բնակիչն էլ իրենն է անում, սակայն հիմնական բեռը ՋՕԸ-ի վրա է, որն էլ պետք է պատասխանատվությամբ կրի այդ բեռը:

– Փորձենք ընդհանրացնել մեր զրույցը. Մեղրիի բնակչության զգալի մասի հույսն այգիներից ստացվող եկամուտն է: Եվ ուրեմն՝ ի՞նչ անել, որ ոռոգման ջրի մատակարարումը խնդիրներ չառաջացնի:

– Ընդամենը հարկավոր է պատասխանատու վերաբերմունք գործի հանդեպ...

Երկու-երեք-չորս ամսով ՋՕԸ-ի աշխատակիցներն աշխատավարձ չեն ստանում, ՋՕԸ-ի պատասխանատուներն էլ պատճառաբանում են՝ կառավարությունից գումարը չեն փոխանցել...

Պոմպավարն էլ ասում է՝ աշխատավարձ չեմ ստանում, չեմ աշխատում: Մենք էլ ասում ենք՝ այգին չորանում է, պոմպակայանն աշխատեցրու, աշխատավարձ ամպայման կվճարեն: Եվ այսպես շարունակ...

– Տպավորություն ստացանք, որ Դուք այնքան էլ համաձայն չեք շրջանառվող տեսակետին, թե ջրի սակավությունն է ներկայիս խնդիրների հիմնական պատճառը:

– Ճիշտ է, ջրի սակավություն կա, բայց այնպես չէ, որ ջուրը չի հերիքում: Ջուրը բավարարում է, թող ոչ ոք չասի՝ ջուրը չի հերիքում: Մեղրիում ոչ թե ոռոգման ջրի պակասություն կա, այլ համակարգի կառավարման խնդիր:

Ամեն տարի՝ օգոստոս-սեպտեմբերին ասում են՝ Արաքսի ջուրը պակասել է, և ջուրը չենք կարողանում հասցնել պոմպակայաններին: Ու տարբեր առաջարկություններ են հնչում՝ ջուրը պոմպակայաններին մոտեցնելու համար, որոնք, մեծ հաշվով, լուրջ չեն:

Իսկ մենք առաջ ենք քաշել խնդրի լուծման առնվազն երկու տարբերակ, որոնց իրականացման դեպքում Արաքսի ջուրը մշտապես հասանելի կլինի պոմպակայաններին: Նկատի ունեմ Արաքսի հունի ջրառատ տեղից՝ դահնայից մինչև պոմպակայան խողովակով ջուր հասցնելը (Շվանիձորի դեպքում՝ մոտ 400 մ հեռավորությունից), որով մշտապես ջուրը կհասնի պոմպակայան:

Նկատի ունեմ նաև Արաքսից՝ ոռոգման ինքնահոս համակարգին (Մեղրի-Ագարակ խաչմերուկի մերձակայքում) ջուր հասցնելը, որի դեպքում նույնպես խնդիրը լուծված կլինի: Մինչև այն ժամանակ, երբ վերջապես կկառուցվի Լիճքի ջրամբարը...

– Պարոն Զաքարյան, կա՞ հարց, որին մեր զրույցի ընթացքում չանդրադարձանք՝ թեմային առնչվող, որի վերաբերյալ ասելիք ունեք:

– Բավականին նուրբ մի հարց. երբ ինչ-ինչ ակնհայտ հարցեր չեն լուծվում Մեղրիում, երբ նույնիսկ ոռոգման համակարգում կամ խմելու ջրի մատակարարման հարցում խնդիրները չեն լուծվում՝ ժողովրդի մոտ այլ խոսակցություններ են ծավալվում կամ այլ կարծիք է ձևավորվում Մեղրիում իրականացվող պետական քաղաքականության հանդեպ, կասկածներ են առաջանում Մեղրու վաղվա օրվա հետ կապված...

Իսկ մենք ասում ենք՝ Նռնաձորում սուբվենցիոն ծրագրով մանկապարտեզ ենք կառուցում, ուրիշ ծրագրեր ենք իրականացնում...

Մի խոսքով՝ որևէ մեկը չպետք է իր գործունեությամբ կամ անգործությամբ բնակչության շրջանում մտահոգություններ առաջացնի կամ կասկածներ սերմանի...

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Մենք մեզանից կախվածն անում ենք, բնակիչն էլ իրենն է անում, սակայն հիմնական բեռը ՋՕԸ-ի վրա է, որն էլ պետք է պատասխանատվությամբ կրի այդ բեռը:

Հարցազրույց «Սյունիք» ՋՕԸ-ի գործադիր տնօրեն Նաիրի Հովհաննիսյանի հետ

Սեպտեմբերի 5-ին Մեղրիի տարածաշրջանի ոռոգման համակարգին ծանոթանալու ընթացքում, զրույց ունեցանք «Սյունիք» ՋՕԸ-ի գործադիր տնօրեն Նաիրի Հովհաննիսյանի հետ:

Թեև ամբողջ օրը միասին էինք շրջում մեզ հետաքրքրող այգեգործական տարածքներում և բնակավայրերում, բայց օրվա վերջում (երբ փորձեցինք ընդհանրացնել մեր տպավորությունները) մի քանի հարց (այդուհանդերձ) հավելյալ պարզաբանման կարիք ուներ, ինչի շուրջ էլ ծավալվեց մեր զրույցը:

Նաիրի Հովհաննիսյանն առաջին անգամ է ներկայանում մեր լսարանին, ուստի և նշենք՝ «Սյունիք» ՋՕԸ-ում աշխատում է 2019 թվականից, սկզբում Սիսիանի տեղամասի պետն էր, 2020 թվականից՝ ընկերության գործադիր տնօրենը:

– Պարոն Հովհաննիսյան, նախևառաջ կուզենայինք իմանալ Ձեր գլխավորած ընկերության բաժանորդների կամ ջրօգտագործողների թիվը:

– «Սյունիք» ՋՕԸ-ի ջրօգտագործողների թիվը 4327 է: Այդ թվում՝ 1343-ը՝ Մեղրիում, 1400-ը՝ Սիսիանում, 859-ը՝ Կապանում, 725-ը՝ Գորիսում:

Մեղրու տարածաշրջանում մոտ 800 հա ոռոգման տարածք կա, որից 497 հա-ի սպասարկումն իրականացնում է ՋՕ ընկերությունը: Մեղրի քաղաքի ոռոգման ենթակա 200 հեկտարից 25 հեկտարն ենք մենք ոռոգում: Մնացածը ոռոգվում է լոկալ առուներով. այդ կարգով ջրօգտագործողները մեր բաժանորդները չեն:

– «Սյունիք» ՋՕ ընկերությունը կազմակերպչական ի՞նչ կառուցվածք ունի Մեղրիում:

– Մեղրու տարածաշրջանում գործում է ՋՕԸ-ի «Մեղրի» տեղամասը, որի ղեկավարը Գևորգ Առաքելյանն է:

Քանի որ Մեղրու տարածաշրջանի ոռոգման համակարգն առանձնահատուկ ուշադրության կարիք ունի, այդտեղ է մշտապես գտնվում նաև «Սյունիք» ՋՕԸ-ի գործադիր տնօրենի տեղակալ Ալեքսան Օհանջանյանը:

Գյուղերում ունենք տեղամասի պատասխանատուներ, ջրբաշխներ, պոմպավարներ:

– Փորձենք ընդհանուր գծերով ծանոթանալ Մեղրու ոռոգման համակարգի ներկայիս վիճակին:

– Ոռոգումն այս տարածաշրջանում սկսում ենք ապրիլի 1-ից: Սկզբնական փուլում իրականացնում ենք ինքնահոս ճանապարհով, այնուհետև՝ հուլիսի վերջից կամ օգոստոսի սկզբից, անցնում ենք ոռոգման մեխանիկական համակարգին: Պոմպերի միջոցով ջուրն Արաքս գետից մղվում է բարձրադիր վայրեր, որտեղից էլ՝ բաժանորդներին:

Տարածաշրջանի որոշ գյուղերում՝ Նռնաձոր, Շվանիձոր և Ալվանք, ոռոգման համակարգը երկաստիճան է:

Մեղրի գետի վիճակը Դուք տեսաք, այնպես որ՝ հուլիսի վերջից, ինչպես նշեցի, խոսք չէր կարող լինել ինքնահոս ջրամատակարարման մասին:

Ունենք 19 պոմպակայան, բոլորն էլ այս պահին աշխատում են:

Ոռոգման սեզոնի ամենալարված օրերն են Մեղրիում: Ինքներդ հավանաբար նկատեցիք՝ տեղամասի տնօրենն ու փականագործն իրարից չեն տարբերվում, բոլորը համատեղ և համերաշխ ամեն ինչ անում են, որ ջուրը հասնի բնակչությանը:

Խոստովանենք՝ տարին էլ բարեհաջող չէր այդ առումով, ձյուն գրեթե չեկավ: Միայն մարտին երկու անգամ լուրջ տեղումներ եղան Մեղրիում՝ ձյան տեսքով, մայիս ամսին էլ անձրևներ էին: Չլինեին այդ տեղումները՝ ինքնահոս ջրամատակարարումն ամբողջովին հարցականի տակ կընկներ:

Իսկ հիմա՝ միայն անցած մեկ օրվա ընթացքում Արաքս գետի մակարդակն իջել է 35 սմ-ով, որը պայմանավորված է և՛ եղանակով, և՛ Նախիջևանի տարածքում գետի ջրերը ջրամբարներ լցնելով: Դա նշանակում է, օրինակ, որ «Արաքս-2» պոմպակայանը գետից

ջուր վերցնելու հնարավորություն չունի: Ասել է թե՝ բախվում ենք խնդիրների, որոնք որևէ անձով պայմանավորված չեն:

Այդ ամենով հանդերձ՝ Մեղրու տեղամասի աշխատանքը գնահատում եմ լավ. թե՛ ինքնահոս, թե՛ մեխանիկական ջրամատակարարման ընթացքում տարածաշրջանում դրական տեղաշարժեր ունենք: Իհարկե, նաև շատ մտահոգություններ ունենք, բայց բազմաթիվ խնդիրներ, որոնք ունեցել ենք անցած տարում՝ այս սեզոնում չկան:

– Ոռոգման սեզոնի որոշակի ժամանակահատվածում Մեղրու տարածաշրջանում ոռոգումն իրականացվում է ինքնահոս համակարգով: Ի՞նչ ասել է Մեղրու ոռոգման ինքնահոս համակարգ:

– 2016 թվականին շահագործման հանձնված այդ համակարգն ունի 27 կմ երկարություն, սկսվում է Լեհվազից: Մայր ջրատարն Ագարակ-Մեղրի խաչմերուկում ճյուղավորվում է. աջ ճյուղը գնում է Ագարակ, ձախ ճյուղը՝ Արաքսաշեն, Ալվանք, Շվանիձոր, Նռնաձոր: Մինչև հուլիսի 27-ը ինքնահոս ջրատարը նորմալ է աշխատել և, կարելի է ասել, խնդիրներ չենք ունեցել: Բայց երբ Մեղրի գետի ջուրը հասավ նվազագույնի՝ ինքնահոս համակարգը չգործեց:

– Ըստ Ձեզ՝ որո՞նք են Մեղրու ոռոգման համակարգի առջև ծառացած ամենահրատապ հարցերը ներկայումս:

– Գլխավոր խնդիրներից մեկը «Արաքս-1» պոմպակայանից դուրս եկող խողովակաշարի վիճակն է, որը պիտի փոխարինվի ամբողջապես: Պոմպի հետ կապված խնդիրներ չունենք այդտեղ. խոսքը մոտ 2,2 կմ երկարությամբ խողովակաշարի մասին է՝ սկսած Ծիրանաձորից:

Հարցը ներկայացրել ենք Ջրային կոմիտե և, կարծում եմ, լուծում կունենա:

Խնդիրն ունենք նաև պոմպերի արդիականացման հետ կապված: Դրանց մի մասը 1980-ականների արտադրության է, որքան էլ նորոգում ենք, միևնույնն է, ֆիզիկական ու բարոյական մաշվածությունը զգալ է տալիս:

– Ինչպես 2022-ի ամռանը, այնպես էլ հիմա՝ Շվանիձորի խնդիրը կապված է Արաքս գետի ջրի սակավության հետ, համենայնդեպս վիճակն այդպես են ներկայացնում գյուղի բնակիչները:

– Այո, գետի ջրի սակավության պատճառով գյուղի պոմպակայան ջուր հասցնելու խնդիր ունենք: Այսօր արդեն հանդիպել եմ «Ագարակի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն պարոն Բելյաևի հետ, և մեզ կտրամադրվի համապատասխան տեխնիկա՝ Արաքսի հունի ջրառատ մասից մինչև պոմպակայան առու բացելու համար:

Ամեն տարի կրկնվող այդ հարցի լուծման վերաբերյալ տարբեր առաջարկություններ կան, բայց դրանք ուսումնասիրման և գնահատման կարիք ունեն: Օրինակ, ասում են՝ երկաթբետոնե պանելներով գետի հունը փոքր-ինչ ուղղենք դեպի ձախ: Մինչդեռ գարնանը, համոզված եմ, գետի վարարման հետևանքով մեծ վնաս կպատճառենք ափամերձ տարածքին, այդ թվում՝ պոմպակայանին:

– Այս օրերին բոլորիս ուշադրության կենտրոնում ընթացիկ հարցերն են, քանի որ բերքի պահպանման ու վերջնական հանգրվան հասցնելու խնդիր ունենք: Բայց կուզենայինք իմանալ՝ ի՞նչ հեռանկարային ծրագրեր ունեք Մեղրու ոռոգման համակարգը հիմնավորապես կարգի բերելու ուղղությամբ:

– Հեռանկարայինը Մեղրու ջրամբարի կամ Լիճքի ջրամբարի կառուցումն է. այդպես կլուծվի Մեղրու տարածաշրջանի ոռոգման հարցը: Ընդ որում՝ այդ հարցն օրակարգում է 1950-60-ականներից սկսած...

Խնդիր ունենք Ագարակ քաղաքի վերին հատվածում՝ նախկին թռչնաֆաբրիկայի տարածքում: Այնտեղ պետք է կառուցվի 10 հազար խորանարդ մետր տարողությամբ օրվա կարգավորիչ ջրամբար: Մեր ունեցած տեղեկություններով՝ 2024-ին կմեկնարկի օրվա կարգավորիչ ջրամբարի կառուցման աշխատանքը:

– Քիչ առաջ Շվանիձորում ականատես եղանք ուշագրավ հանդիպման. մի պոմպավար՝ Մանվել Առաքելյանը, կարողացել է գյուղի ոռոգման համակարգում էական փոփոխություններ մտցնել: Չե՞ք կարծում, որ կադրերից էլ է շատ բան կախված:

– Ջրօգտագործողների ընկերությունը, հավատացեք, շատ հետաքրքիր կառույց է: Եթե չգնահատես գյուղացու աշխատանքը, եթե չգիտակցես այգեգործության դերը մեղրեցու կյանքում, ապա չես կարող աշխատել: Մեր աշխատանքը թիմային է՝ Ծղուկ գյուղից մինչև Նռնաձոր...

Եթե պոմպավարը կամ ջրբաշխը չտեսնեն իրենց ղեկավարի սրտացավ վերաբերմունքը, ապա լրջորեն չեն վերաբերվի իրենց գործին:

Այս պահի դրությամբ կադրերով ապահովվածությունը բավարար է:

– Տեղափոխվենք ֆինանսական ոլորտ. որքանո՞վ է պետությունն օգնում Մեղրու տարածաշրջանի ջրօգտագործողներին: 2000 թվականին Մեղրու տարածաշրջանի գյուղերի համար կառավարությունը սահմանեց ոռոգման ջրի զեղչված սակագին՝ 1 խորանարդ մետրի դիմաց 5,5 դրամ՝ 11 դրամի փոխարեն: Իսկ հիմա՞:

– Մեղրու տարածաշրջանում ներկայումս միայն Նռնաձոր գյուղն է օգտվում այդ զեղչից: Մյուս գյուղերում ջրօգտագործողը 1 խորանարդ մետրի համար վճարում է 11 դրամ:

Ասել է թե՝ գնի զեղչը Մեղրու տարածաշրջանում 2021-ի մայիսից այլևս չի գործում, բայց ներդրվել է մարզի սահմանամերձ բոլոր գյուղերում:

Դրա հետ մեկտեղ՝ ՋՕ ընկերությունը պետության կողմից սուբսիդավորվում է գարնան նախապատրաստական աշխատանքները կատարելու համար, աշխատավարձն էլ պետությունից ենք ստանում, նաև ծախսվող էլեկտրաէներգիայի գումարն է պետությունը վճարում:

Մենք բավականին լուրջ զբաղվում ենք նաև մատակարարված ջրի դիմաց գումարները հավաքելով: 2022-ին, օրինակ, մարզի մասշտաբով գումարների հավաքման ցուցանիշը 93 տոկոս էր կազմում, բայց այդ միջոցներով ընթացիկ խնդիրներ ենք միայն լուծում: Չպետք է մոռանալ՝ մեր հանրապետությունում ոռոգման սեզոնը սկսվում է ապրիլի 1-ին՝ Մեղրիով, ավարտվում նոյեմբերի 1-ին՝ Մեղրիով:

– Ֆիզիկապես և բարոյապես մաշված պոմպեր, տիղմաբեր Արաքս, որի ջրերն անընդհատ վնաս են հասցնում պոմպերին... Որքանով տեսանք, ՋՕ ընկերությունը Մեղրիում անընդհատ պոմպերի նորոգման խնդրի առաջ է կանգնում:

– Ընթացիկ նորոգումները կարողանում ենք կատարել Մեղրիում, դրա համար ունենք համապատասխան հաստոցներ: Ավելի բարդ խնդիրներ առաջանալու դեպքում պոմպերը նորոգում ենք Երևանում:

Բոլոր պոմպակայաններում նաև ռեզերվ ունենք. պոմպը նորոգման տանելու դեպքում կարողանում ենք գործի դնել մեկ այլ պոմպ, որպեսզի ջրամատակարարումը չընդհատվի:

– Քիչ առաջ նշեցիք, որ պետական մակարդակով ֆինանսավորվում են գարնանն իրականացվող նախապատրաստական աշխատանքները: Կուզենայինք իմանալ՝ 2023-ի գարնանը Մեղրու տարածաշրջանում (այդ նպատակով) որքա՞ն միջոցներ են հատկացվել և կոնկրետ ի՞նչ աշխատանքներ են կատարվել:

– Մեղրու տարածաշրջանում՝ 2023-ի մարտից մինչև հունիս, ծախսվել է մոտ 22 մլն դրամ: Դրանից 15 մլն դրամն ուղղվել է պոմպերի և էլեկտրական շարժիչների վերանորոգմանը. այդ աշխատանքը կատարել է «Սինխրոն» ՍՊԸ-ն:

Նռնաձոր գյուղում «Նռնաձոր-2» պոմպակայանից դուրս եկող խողովակաշարը միացվել է ինքնահոս համակարգի խողովակաշարին, որի շնորհիվ ջուրն անխափան հասնում է գյուղ: Գործող խողովակաշարը հին էր և անընդհատ վթարների պատճառ էր դառնում:

Շվանիձոր գյուղում վերագործարկել ենք պոմպերից մեկը՝ «Շվանիձոր-3»-ը, որը չէր գործում 2016-ից ի վեր: Վերագործարկման շնորհիվ գյուղի վերին տարածքի այգիները նույնպես ապահովվել են ոռոգման ջրով:

Տարածաշրջանում թվով 25 փական փոխարինել ենք նորով: Նաև մեքենաներ ու սարքավորումներ ենք նորոգել:

– Դուք նշեցիք աշխատավարձերի մասին, որ պետության կողմից է սուբսիդավորվում: Հետաքրքիր է՝ պոմպավարը, ջրբաշխը ժամանակին աշխատավարձ ստանո՞ւմ են, թե՞ ոչ:

– Երբեմն-երբեմն, օբյեկտիվ պատճառներով, ձգձգումներ լինում են, բայց, ի վերջո, վճարվում են: Ներկայումս վճարված է հունիս ամսվա աշխատավարձը, առաջիկա օրերին կվճարենք նաև հաջորդ ամիսների աշխատավարձը: Կարող եմ հավաստիացնել՝ ընկերությունը որևէ աշխատակցի աշխատավարձի պարտք չի ունենա:

– Մեր ունեցած տեղեկություններով՝ Կարմիր խաչը Նռնաձոր գյուղին է հատկացրել երկու ժամանակակից պոմպ, մեկը տեղադրել եք և բավականին արդյունավետ աշխատում է, իսկ մյուսը...

– Երկրորդ պոմպն առայժմ չի տեղադրվել, որովհետև ներկայումս գործող հին պոմպը բարձր արդյունավետությամբ է աշխատում: Այսինքն՝ այս պահին նոր պոմպի տեղադրման անհրաժեշտություն Նռնաձորում չկա: Սեպտեմբեր-հոկտեմբերին Ձեր նշած երկրորդ պոմպը նույնպես կտեղադրենք և կօգտագործենք մյուս պոմպերը խափանվելու դեպքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Կապան, քեզանում են մեր բոլոր ակունքները

Ավանդույթ դարձած և յուրաքանչյուր տարի նշվող Կապան քաղաքի տոնը, որը տեղի ունեցավ օգոստոսի 19-ին, այս անգամ անցավ «Կապան, քեզանում են մեր բոլոր ակունքները» խորագրի ներքո:

Տոնական միջոցառումների շարքը սկսվեց առավոտվանից: Մշակույթի կենտրոնի հրապարակում երիտասարդների շուրջպարից հետո կտրվեց խորհրդանշական տորթը, որը համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի անդամները բաժանեցին քաղաքի տարբեր թաղամասերում:

Գարեգին Նժդեհի հրապարակում տրվեց մարզական մրցումների մեկնարկը՝ կրոսավազք, հեծանվավազք, ինքնագլորներով մրցույթ: Հաղթողներին և մրցանակակիրներին պարգևներ հանձնեց Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:

Այնուհետև հանդիսության մասնակիցները և հյուրերը բարձրացան Բաղաբուրջի հուշահամալիր և հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան առաջին և մերօրյա պատերազմներում ընկածների հիշատակին:

Հաջորդ հանգրվանը Կապանի մշակույթի կենտրոնն էր, որտեղ հուշագիր ստորագրվեց Կապան համայնքի և Մոսկվա քաղաքի հարավային վարչական շրջանի միջև: Հուշագիրը ստորագրել են համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը և Մոսկվա քաղաքի Հարավային վարչական շրջանի աշխատակազմի ղեկավար Ալեքսեյ Երոշինը:

Իսկ արդեն կեսօրին մշակույթի կենտրոնի համերգային մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, ողջույնի խոսքերից հետո մեծարվեցին համայնքի տարբեր ոլորտների ներկայացուցիչներ, իսկ «Կապան» մեդալով պարգևատրվեց վաստակաշատ մանկավարժ Ռոման Ստեփանյանը: Պաշտոնական մասից հետո ելույթ ունեցան մշակույթի կենտրոնի էստրադային-սիմֆոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Սամվել Հայրապետյան) և Կապանի կանանց երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Գայանե Հարությունյան), ինչպես նաև մշակույթի կենտրոնի երգիչ-երգչուհիներ:

Չարենցի փողոցում ցուցադրություն էր կազմակերպվել «Կապան, քեզանում են մեր բոլոր ակունքները» խորագրով, որին հանդիսավոր նիստից հետո ծանոթացան տոնակատարության մասնակիցները:

Թումանյան փողոցում տեղի ունեցավ «Սյունիք» հարթաքանդակի բացման արարողություն: Մարզի հինգ քաղաքային և երկու գյուղական համայնքներն ամբողջացնող հարթաքանդակի հեղինակը Անդրեաս Օհանջանյանն է, քանդակագործը՝ Գագիկ Ալեքսանյանը: Հարթաքանդակին պատկերված Խուստուփ լեռը խորհրդանշում է Կապան համայնքը, բարձրաբերձ Կապուտջուղը՝ Քաջարանը, ժայռերի քարանձավային քաղաքը՝ Գորիսը, հինավուրց աստղագիտության կենտրոն Զորաց քարերը՝ Սիսիանը, հայկական նուռը և նռան ծառը՝ մրգաշատ Մեղրին, իսկ ցորենի հասկերը, կաի կարասին, սարահարթերը խորհրդանշում են գյուղական համայնքները՝ Տեղը և Տաթևը: Հյուրերին հաճույք պատճառեցին «Զանգեզուր» ժողովրդական պարային խմբի կատարումները (գեղարվեստական ղեկավար՝ Վահագն Գասպարյան):

Քաղաքի տոնին նվիրված միջոցառումների թվում էր դասական երաժշտության համերգը, որ կայացավ Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճում, ներկաների համար ելույթ ունեցավ Հայաստանի ազգային կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան, կոնցերտմայստեր՝ Աստղիկ Վարդանյան): Հնչեցին Ռուբեն Ալթունյանի, Անտոնիո Վիվալդիի, Կոմիտասի, Դմիտրի Շոստակովիչի ստեղծագործություններից: Որպես հավարտ համերգի՝ հնչեց Աստոր Պիացոլլայի հանրահայտ ստեղծագործությունը՝ «Լիբերտանգոն»:

Երեկոյան կողմ առավել քան մարդաշատ էին Կապանի մշակույթի կենտրոնի տարածքը, Գարեգին Նժդեհի հրապարակը: Կազմակերպվել էր կապանցի շնորհաշատ մարդկանց, անհատ ձեռներեցների և կազմակերպությունների ցուցահանդես-վաճառք, իսկ կրկեսային ծրագիրն անտարբեր չթողեց փոքրիկ կապանցիներին: Համերգային ծրագրով հանդես եկավ «Առիթմիա» բենդ խումբը: Շատրվաններին հարակից հարթակում ուժերն էին չափում բազկամարտիկները, ծանրաբար բարձրացնողները, անցկացվեց պարանի ձգման մրցույթ: Իսկ ամենավերջում ժամանցային ծրագիրն էր՝ Ռաֆայել Երանոսյանի և Լուիզա Ներսիսյանի մասնակցությամբ, իսկ հետո՝ շքահամերգը (գալա համերգը): Կապանցիների հյուրն էր Իվետա Մուկուչյանը: Խաղարկվեց Եգիպտոսում շրջագայելու ուղեգիր:

Տոնը շարունակվեց մինչև կեսգիշեր...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Խնձորեսկում գործարկվեց հատիկաընդեղենի գործարանը, իսկ Գորիս քաղաքում ունեցանք ևս մեկ հիմնանորոգված փողոց ու մանկապարտեզ

Օգոստոսի 29-ին Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղում գործարկվեց հատիկաընդեղենի նորաշեն գործարանը, որը կառուցվել է ՀՀ կառավարության, Գորիսի համայնքապետարանի, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի և Չինաստանի կառավարության համագործակցության շրջանակում:

Ինչ այդ 50 տնտեսություն (տվյալ ծրագրի շրջանակում) ստացել էր հացահատիկաընդեղենի սերմացու, տնտեսություններին տրամադրվել էր գյուղտեխնիկա՝ աշխատանքները կազմակերպելու համար:

Նորագույն սարքավորումներով զինված գործարանը՝ իր տեսակով, միակն է մարզում: Այդտեղ տեսակավորվելու և փաթեթավորվելու է տեղական արտադրանքը:

Գործարանի բացման արարողությանը ելույթ ունեցան Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տեր Մակար վարդապետ Հակոբյանը, ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի ներկայացուցիչ Նաննա Սկաուն, Հայաստանում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յան Յոնգը, Գորիսի համայնքապետի տեղակալ Իրինա Յոլյանը:



Գործարանի բացման արարողությանը մասնակցում էր Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը:

Նույն օրը Գորիս քաղաքում տեղի ունեցավ մի շարք տարածքների բացման արարողություն, որոնց հիմանորոգումն իրականացվել էր ՀՀ կառավարության և համայնքի համաներդրումային ծրագրով:

Մասնավորապես հիմնանորոգվել է Գորիսի «Ավանգարդ» 5-րդ թաղամասի 2,2 կմ երկարությամբ ճանապարհը՝ համապատասխան ենթակառուցվածքներով (ծրագրի արժեքը՝ 199 մլն դրամ, որի 55 տոկոսը տրամադրել է ՀՀ կառավարությունը):

ՀՀ կառավարության և «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» համագործակցությամբ վերակառուցվել են Գորիս քաղաքի Գետափնյա թաղամասի, ինչպես և Վարարակն գետի հարակից մայթերը:

Հիմնանորոգվել է նաև Գորիս քաղաքի թիվ 3 մանկապարտեզի շենքը (ծրագրի արժեքը՝ 223 մլն դրամ, որի 80 տոկոսը կառավարության ներդրումն է):

//

Հայ-իրանական մշակութային խոհանոցային փառատոներ Սյունիքում

ՍԻՍԻԱՆ

Օգոստոսի 10-ին Սիսիանում կայացավ հայ-իրանական մշակութային-խոհանոցային փառատոն: Փառատոնը նախևառաջ միտված էր հայ-իրանական մշակութային կապերի ակտիվացմանը: Փառատոնը նպատակ ուներ նորովի արթնացնել հիշողությունը Նավասարդի, ինչպես և Հայկի ու Բելի ճակատամարտի մասին, որ տեղի է ունեցել 4515 տարի առաջ՝ օգոստոսի 11-ին, որն էլ ավարտվեց Հայկի փառահեղ հաղթանակով:

Փառատոնը մեկ ուրիշ նպատակ էլ ուներ՝ ևս մեկ անգամ հանրահռչակել Սյունիքի մարզի և մասնավորապես Սիսիանի տարածաշրջանի զբոսաշրջային հնարավորությունները: Նաև այդ խնդրին էին ծառայեցված հրապարակում և մերձակա փողոցներում տեղադրված 80-ից ավելի տաղավարում ներկայացվող ցուցանմուշները՝ ձեռագործությունից, կիրառական արվեստից ու կերպարվեստից, նաև գեղարվեստական խեցեգործությունից:

Մասնակիցներն օգոստոսի լույս 11-ի գիշերը՝ ժամը 3:30-ից մինչև 4:00 Զորաց քարերում դիտել են Հայկի համաստեղության աստղերի գալուստը: Փառատոնի բացմանը, որ տեղի ունեցավ Սիսակ Նահապետի անունը կրող հրապարակում, ելույթներ ունեցան Թաթուլ Ալթունյանի անվան հայկական ժողովրդական երգի-պարի պետական վաստակավոր անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Գրիգոր Ոսկանյան), Հայաստանի վաստակավոր արտիստներ Արսեն Գրիգորյանը (Մրո), Դավիթ Ամալյանը, «Կարին» ավանդական երգի-պարի համույթը՝ Գագիկ Գինոսյանի գլխավորությամբ: Ելույթներ են ունեցել նաև Սիսիանի «Գրանդ դանս» պարային համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Արման Դավթյան), Աղվան Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործական կենտրոնի պարային խումբը (գեղարվեստական ղեկավար՝ Արմինե Սարգսյան), Դարբասի թանգարանի արվեստի դպրոցի պարի խումբը՝ Լուսինե Հովհաննիսյանի ղեկավարությամբ, Համո Սահյանի անվան քաղաքային մշակույթի կենտրոնի ժողգործիքների համույթը՝ Հարություն Գրիգորյանի գլխավորությամբ:

Հարյուրավոր սիսիանցիներ, ինչպես և հյուրեր ու զբոսաշրջիկներ ժամեր շարունակ ունկնդրում էին գեղարվեստական այդ համույթների ելույթները, որից հետո էլ տեղափոխվեցին Զորաց քարեր: Իսկ Սիսիանի համայնքապետարանը՝ Արմեն Հակոբջանյանի գլխավորությամբ, ամեն ինչ արել էր փառատոնը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

Նշվեց Քաջարան քաղաքի հիմնադրման 65-րդ տարեդարձը

Այս տարի հոբելյանական էր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի և նույնքան հոբելյանական Քաջարան համայնքի համար: Լրացել է քաղաքի 65-րդ տարեդարձը: Քաղաքի տոնին նվիրված միջոցառումների շարքը սկսվեց կենտրոնական հրապարակից՝ հյուրերի դիմավորումով, ովքեր եկել էին արտերկրից, մայրաքաղաքից և մարզի տարբեր համայնքներից:

Նախևառաջ հյուրերը և հանդիսության մասնակիցները հարգանքի տուրք մատուցեցին Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին՝ այցելելով հուշահամալիր:

Հաջորդ հանգրվանը Քաջարան խոշորացված համայնքի Լեռնաձոր գյուղն էր, որտեղ տեղի ունեցավ բնակավայրի կենտրոնական պուրակի հանդիսավոր բացումը:

Օրեցօր բարեկարգվում է քաղաքը, մարդկանց համար ստեղծվում են ապրելու, հանգստանալու բարեհարմար պայմաններ: Խաղահրապարակների հանդիսավոր բացում տեղի ունեցավ Շիրվանզադեի և Բակունցի փողոցներում:

Օրվա գլխավոր իրադարձությունը Քաջարանի մշակույթի պալատում էր, որտեղ փողային նվագախումբը տոնական մեղեդիներ էր հնչեցնում: Պալատի համերգասրահում հանդիսավոր նիստը սկսվեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանի բարեմաղթանքի խոսքով ու աղոթքով:

Քաջարանի տարեդարձի առթիվ բարեմաղթանքի խոսքեր հնչեցրին Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիյը, Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանը և ուրիշներ: Այնուհետև եղան պարգևատրումներ: Ռոման Խուդոլիյին շնորհվեց «Քաջարանի պատվավոր քաղաքացի» կոչում: Տարբեր բնագավառներ ներկայացնող քաջարանցիներ արժանացան շնորհակալագրերի, հուշանվերների և դրամական պարգևների:

Պալատի ճեմասրահում հյուրասիրություն էր կազմակերպվել, մարդիկ մի գավաթ խմիչքով շնորհավորում էին միմյանց, մտքեր փոխանակում:

Այնուհետև քաջարանցիները Լեռնաձոր գյուղում դիտեցին «Ցանկապատ» ներկայացումը (Ստեփան Զորյանի համանուն պատմվածքի մոտիվներով, պրոդյուսեր՝ Հայկ Խանզադյան, բեմադրությունը և սցենարը՝ Տիգրան Գյուլումյանի):

Քաջարանի հոբելյանական տարեդարձին նվիրված հյուրասիրություն էր կազմակերպվել քաղաքի կենտրոնական հատվածում, այնուհետև շքահամերգ էր (գալա համերգ) և տոնական հրավառություն:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՖեստիՎառը նաև Սիսիանում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հանրային առաջին հեռուստաընկերության նախաձեռնությամբ 2023 թվականի օգոստոսի 26-ին Սիսիանի Սիսակ Նահապետի անվան հրապարակում կայացավ ՖեստիՎառը, որի շրջանակում օրվա առաջին կեսին ելույթ ունեցան Սյունիքի մարզի կատարողներն ու խմբերը, ինչպես նաև «Թմբաթա» նվագախումբը և The Boing Orchestra-ն:

Այնուհետև մեկնարկեց մեծ համերգը՝ Գրիշա Աղախանյանի «Top 10 of Rabiz» ծրագրով և Գարիկի ու Սոնայի հիթային կատարումներով:

Միջոցառման շրջանակում տեղադրվել էին տաղավարներ, որտեղ ինչպես տեղացի, այնպես էլ հանրապետության տարբեր համայնքներից ժամանած քաղաքացիները ներկայացրին իրենց արտադրանքը:

ԿԱՊԱՆ

Կապանի մշակույթի կենտրոնի առջևի հրապարակում օգոստոսի 26-ի առավոտվանից տաղավարներ էին տեղադրվում, այլ պատրաստություններ տեսնում: Երեկոյան արդեն ամեն ինչ պատրաստ էր անցկացնելու հայ-իրանական խոհանոցային-մշակութային փառատոնը, որին բարձրաստիճան հյուրեր էին մասնակցում հարևան հանրապետությունից՝ Իրանի Իսլամական Հանրապետության մեջլիսի պատգամավորներ Հուսեյն Հաթամին, Մուսամե Փաշային, Արա Շահվերդյանը: Միջոցառմանը ներկա էին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին, հյուպատոսարանի աշխատակիցներ, հյուրեր մարզի այլ քաղաքներից, հարյուրավոր կապանցիներ:

Մինչև միջոցառման սկսվելը գլխավոր հյուպատոսը անակնկալ էր պատրաստել՝ Կապանի համայնքի ղեկավարի դիմանկարով գորգ, որը Գևորգ Փարսյանին հանձնեց Իրանի մեջլիսի պատգամավոր Արա Շահվերդյանը, որից հետո հանդես եկան Կապանի մշակույթի կենտրոնի և Իրանից ժամանած բարձրակարգ երաժշտական խմբերն ու անհատ կատարողները: Տոնական մթնոլորտն ապահովում էին իրանական ազգային նվագարաններից հնչող երաժշտությունը ու երգը, ծիսական պարային կատարումները:

Իսկ ամենավերջում միասնական շուրջպար էր տեղացիների հետ: Միջոցառման ընթացքում փառատոնի մասնակիցները հնարավորություն ունեցան օգտվել տաղավարներում ցուցադրվող ճաշատեսակներից, քաղցրավենիքներից և հյութերից, ծանոթանալ այդ ճաշատեսակների պատրաստման հմտություններին:

Երաժշտական կատարումների արանքում ճեպազրույց ունեցանք Իրանի մեջլիսի հայազգի պատգամավոր Արա Շահվերդյանի հետ, ով մասնավորապես ասաց. *«Հայաստանն Իրանի 15 սահմանակից երկրներից մեկն է, որ ԵԱՏՄ միության անդամ է: Իրանը փորձում է Հայաստանի միջոցով մուտք գործել այդ մեծ առևտրատնտեսական շուկա: Փորձը ցույց է տալիս, որ Հայաստանի և Իրանի փոխհարաբերությունները վերջին երեք տարում ավելի են սերտացել: Իսկ այսօրվա միջոցառման կայացումը մեծապես պայմանավորված է Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսության գտնվելով»:* Մինչև փառատոնը սկսվելը Կապանի համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանն ընդունել է իրանցի պատգամավորներին և Կապանում ԻԻՀ գլխավոր հյուպատոսին, քննարկվել են երկու ժողովուրդների երկկողմ հարաբերությունների էլ ավելի բարելավմանն առնչվող հարցեր:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Անվանի պատմաբանի և իր գերդաստանի «անդրանիկապատումը»...

Հայաստանի ամենաճանաչված ու հեղինակավոր պատմաբաններից է պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան և հայոց պատմության ամբիոնի վարիչ Էդիկ Գարեգինի Մինասյանը:

Հայրենանվեր հայորդին արմատներով արևմտահայ է, ծնվել է սասունցի մոր՝ Լուսիկ Սիմոնի Հարությունյանի և խնուսցի հոր՝ Գարեգին Պողոսի Մինասյանի տոհմիկ ավանդապահ ու հայրենպաշտ ընտանիքում: Չլիներ թուրք-թշնամին, չլիներ հայոց ցեղասպանությունը, Մինասյանների տոհմն ու գերդաստանը հավերժ կմնար իր հայրենի բնաշխարհում՝ միշտ հավատարմորեն նվիրված լինելով հարազատ երկրին ու հազարամյա հայրենական սրբություններին: Սակայն թուրքական յաթաղանն արեց իր սև գործը: Մեծ եղեռնի ճիրաններում ողջակիզվեցին միլիոնավոր հայեր: Մինասյանների գերդաստանը ևս թանկ կորուստներ ունեցավ: Ողջ մնացածներն անցան Արաքսից այս կողմ և նոր տունուտեղ հյուսեցին Արագածի լանջերին, որն իր կլիմայով և մակերևույթով նմանվում էր Սասնո լեռներին: Արևմտահայաստանը մնաց հեռվում՝ օտարության և գերության մեջ, սակայն հիշողությունը հայրենի երկրի վերաբերյալ մնաց կենդանի ու կենսունակ: Ո՛չ թուրքական յաթաղանը, ո՛չ ստալինյան համակենտրոնացման ճամբարներն ի զորու չեղան ոչնչացնելու մեր ժողովրդի պատմական հիշողությունը: Այդ ամբարված հիշողության ծալքերից վերընձյուղվեց և վեր հառնեց բոլոր ժամանակների մեծանուն հայի՝ Չորավար Անդրանիկի կերպարը, ով պատմության լուսանցքից անգամ դուրս էր թողել ռուս-թուրքական դավադիր գործարքը: Անդրանիկի կերպարը մաքրվեց մեր թշնամիների կողմից շղարշված կեղտ ու մրուրից և վերադարձվեց մայր-ժողովրդին: Այդ պատմական առաքելությունն իր ուսերին առավ նաև մեր ժամանակների ճանաչված պատմաբանը՝ բազում հոդվածների և ուսումնասիրությունների հեղինակ Էդիկ Մինասյանը: Նրա անդրանիկապաշտությունը գալիս էր տասնամյակների խորքից և ուներ պատմական խոր արմատներ:

Մինասյան Էդիկի պապը՝ Պողոս Մինասյանը՝ նույն ինքը՝ Կալե անունով առյուծասիրտ ֆիդային, սուլթան Համիդի բռնապետական ռեժիմի դեմ զենք բարձրացողների մեջ էր: Նա Սասունի լեռներում մարտնչել է թուրք-թշնամու դեմ ազգային փառաբանված հերոս Անդրանիկի գլխավորությամբ: Պատմական փաստ է, որ Կալեն Անդրանիկ զորավարի զինվորն է եղել և խորապես նվիրվել է թե՛ իր առասպելական անուն ունեցող զորավարին, թե՛ իր հայրենի բնօրրանի ազատագրության գործին: Հետագա ողջ կյանքի ընթացքում Կալեն՝ Մինասյանների տոհմի նահապետ Պողոսը, սրբությամբ պահպանեց իր բարոյական հավատարմությունն ու ապրեց Անդրանիկի զինվորը լինելու անբիծ ու անխառն հպարտությամբ:

Իսկ մեծանուն Չորավարն իր սխրալից կյանքով վաղուց պատվի, խիզախության ու հերոսականության չափանիշ էր դարձել, և Անդրանիկ զինվոր՝ նշանակում էր լինել ազատության ու արդարության զինվոր ընդհանրական ու համամարդկային առումով: Անդրանիկի թողած ազգային մեծ խիզախումի և էրգրի ժողովրդի ժառանգորդների ու հետնորդների հիշողության ու պատվի դասն ու պատգամը շարունակվում է մինչ այսօր և շարունակվելու է ընդմիշտ: Հայրենանվեր այս դասը շարունակում է արիասիրտ ֆիդայի Կալեն պապի ժառանգորդ թոռը՝ ականավոր պատմաբան ու հայրենանվեր մտավորական Էդիկ Մինասյանը: Շարունակում է ոչ մենակ ու միայնակ, այլ եղբայրներով ու քույրերով:

Անդրանիկապաշտությունը Մինասյանների գերդաստանում բարոյական գերագույն սկզբունքն էր հենց խորհրդային ժամանակներից սկսած: Խորհրդային ոչ մի ղեկավարի օրոք ազգայինը հալածված չի եղել նրանց ընտանեկան հարկի ներքո և մերձավորների միջավայրում: Կոմունիստական ինտերնացիոնալ գաղափարախոսությունը լոկ արտաքուստ էր շղարշված, իրականում նրանք՝ Մինասյան տոհմի մեծն ու փոքրն ապրում ու շնչում էին ազգային մասունքներով ու հիշատակներով, աննման էրգրի մասին հուշերով ու պատմություններով, ազգային էպոսով, ավանդական երգ ու պարով: Եվ հիշողությունների կենտրոնում ու առանցքում Չորավար Անդրանիկն էր՝ իր առասպելական կերպարով, անթիվ-անհամար պատմություններով, պատմության և առասպելի կողք-կողքի՝ զուգահեռներով: Ահա այսպիսի միջավայրում է դաստիարակվել, հասակ առել ապագա վաստակաշատ պատմաբան

Անդրանիկապաշտությունը Մինասյանների գերդաստանում բարոյական գերագույն սկզբունքն էր հենց խորհրդային ժամանակներից սկսած: Խորհրդային ոչ մի ղեկավարի օրոք ազգայինը հալածված չի եղել նրանց ընտանեկան հարկի ներքո և մերձավորների միջավայրում:

Էդ. Մինասյանը, ով հասունության տարիքից արդեն նվիրվել է Չորավարի կյանքի և գործի քննությանն ու իմաստավորմանը, մատաղ սերնդին Անդրանիկի թողած դասերով և պատգամներով դաստիարակմանը: Չորավարի ծննդյան և հիշատակի օրերին Էդ. Մինասյանը մերձավորներով, հարազատներով և զինակիցներով, որպես կանոն և օրինաչափություն, այցելում է Եռաբլուր և ծաղիկներ խոնարհում մեծ հայի շիրիմին: Ապա ոգեշունչ խոսք ասում՝ ուղղված պատանի ու երիտասարդ սերնդին:

Վերոնշյալ առիթներով Էդ. Մինասյանի հոդվածներն ու ակնարկները տպագրվել են «Հայաստանի Հանրապետություն», «Երևանի համալսարան», «Երկիր Ավետյաց», «Ազգ», «Առավոտ» և այլ պարբերականներում: 2015 թ., երբ լրացավ Չորավարի ծննդյան 150-ամյակը, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդ. Մինասյանը կազմակերպված գիտաժողովներում հանդես եկավ բովանդակալից զեկուցումներով, որոնցում նորովի քննության և իմաստավորման ենթարկեց հայ մեծ զորավարի կյանքի ու գործունեության մի շարք դրվագներ: Հոբելյանական այդ օրերին նա ծավալուն բանախոսություններով հանդես է եկել մայրաքաղաքում ու մարզային մշակութային կենտրոններում:

Էդ. Մինասյանի սույն հրապարակումներն ու ուսումնասիրությունները դեռևս չեն ամփոփվել առանձին մի ժողովածուի շրջանակներում և դեռևս չեն դարձել հայ ընթերցողի սեփականությունը: Բայց դա միայն ժամանակի հարց է...

Ինչպես մեր էպոսն է դարեր շարունակ բանավոր փոխանցվել սերնդից-սերունդ, այնպես էլ հայոց անդրանիկապատումը դեռևս բավարար չափով ամփոփված չէ գրավոր ժողովածուներում: Սակայն այն երբեք չի նսեմացնում փաստն ու գիտակցումը, որ Անդրանիկ զորավարի կյանքի, գործի և անվան հանդեպ եղել է իսկական սեր ու պաշտամունք, եղել է սրբազան ու սրբացված վերաբերմունք:

Վկա՝ Խնուսի և Սասունի ժառանգորդ Մինասյանների բացառիկ զմայլանքն ու պաշտամունքը նրա սրբազանագույն անվան ու հիշատակի հանդեպ:

- Էրգիր կերթամ...

Այսպես է մեզ պատգամել Սասնա տան շառավիղ Մուշեղ Գալշոյանը: Այս պատգամին հավատարիմ են Մինասյան տոհմի մեծերն ու փոքրերը, նրանց բոլոր երկրակիցները, ովքեր համոզված են, որ մի օր, օրերից մի օր բացվելու են էրգրի դռները, և հենց Սասունում ու Մուշում ոգեկոչելու են անմահանուն Չորավարի ծննդյան ու հիշատակի օրերը...

Փառք ու պատիվ Չորավարի անվանը, և խորին երախտագիտություն նրանց, ովքեր ամեն օր իրենց հոգում խնկարկում են նրա սրբալույս հիշատակը:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ՀՀ ԳԱԱ ՊԱՄՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՎԱԳ ԳԻՏԱՇԽԱՏՈՂ, ԳՐՈՂ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ), քիմիայի (11 դասաժամ), կենսաբանության (12 դասաժամ), ԹԳՀԳ /ինֆորմատիկայի/ (9 դասաժամ), երաժշտության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 24-ից մինչեւ սեպտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 8-ին՝ ժամը 12:00-ին /դասվար, քիմիա, ինֆորմատիկա առարկաներ / և ժամը 13:00-ին / կենսաբանություն, երաժշտություն առարկաներ/ ՀՀ Սյունիքի մարզի Սյունիքի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Սյունիք, Վերին թաղ 19:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094)06-48-13, 0285-2-04-44 հեռախոսահամարներով: 23.08.2023թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Արծվանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ), մաթեմատիկա (11 դասաժամ), կենսաբանության (12 դասաժամ), ԹԳՀԳ /ինֆորմատիկայի/ (9 դասաժամ), երաժշտության (6 դասաժամ), ֆիզիկա (13 դասաժամ), տեխնոլոգիա (3 դասաժամ), կերպարվեստ (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 05-ից մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին /դասվար, ֆիզիկա, ինֆորմատիկա առարկաներ/ և ժամը 15:00-ին / մաթեմատիկա, տեխնոլոգիա, կերպարվեստ, երաժշտություն առարկաներ/ ՀՀ Սյունիքի մարզի Արծվանիկի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Արծվանիկ, փողոց 1, շենք 21: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 76-67-47, հեռախոսահամարով:

ԿՈՐԵԼ Է Սիսիանի պետական հումանիտար քոլեջի 1999 թ. շրջանավարտ՝ «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ, Կարինե Ռաֆայելի Օհանջանյանի դիպլոմը՝ Կ №044448, գրանցման համար՝ №470: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Բենիկ Վոլոդյայի Չափուղունցին պատկանող՝ 1985 թ.արտադրության ԷՕ-մակնիշի էքսկավատորի պետհամարանիշը՝ 89-17 SL: Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ներքոգրյալ աշխատողի թափուր տեղերի համար.

1. Ձինվորական ղեկավար
2. «Նկարչության հմտություններ» մոդուլը դասավանդող դասախոս- 50 ժամ:

Թափուր տեղի մրցույթին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր համապատասխանում են.

- Ձինվորական ղեկավարի դեպում մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել պահեստազորի սպաների բարձրագույն ռազմական կրթությամբ կամ բարձրագույն կրթությամբ և համապատասխան վերապատրաստում ունեցող անձիք:
- Մասնագիտական առարկաների/մոդուլների դեպքում տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին է ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը.

- դիմում,
- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- անձնագիր (բնօրինակը և պատճենը),
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն,
- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը):

Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը, հավաստագրերը (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են քոլեջի մասնաշենքում, ս.թ սեպտեմբերի 14-ից մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր, ժամը 1000-ից մինչև 1600, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերին: Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի հոկտեմբերի 3-ին ժամը 1400-ին քոլեջում:

Հասցեն՝ ք. Կապան, Շահումյան 37ա, հեռախոս՝ 0285-5-25-70, 093-777-663:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց պատմության ուսուցչի (4 ժամ), զինղեկի (5 ժամ), թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. սեպտեմբերի 14-ից մինչև սեպտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 29-ին, ժամը 10:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Կապան Մ. Հարությունյան փ. 5-Ա: Տեղեկությունների համար զանգահարել 077782955 կամ 028553783:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (8 ժամ), կենսաբանության (8 ժամ), բնագիտության (4 ժամ), բնության (4 ժամ), մաթեմատիկայի (5 ժամ), ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. սեպտեմբերի 6-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին, ժամը 10:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Կապան Մ. Հարությունյան փ. 5-Ա: Տեղեկությունների համար զանգահարել 077782955 կամ 028553783:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (18 ժամ), Ֆիզիկայի (18 ժամ), կենսաբանության (8 ժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 8-ին, ժամը 10:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում. հասցեն՝ ք. Կապան Մ. Հարությունյան փ. 5-Ա: Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարներին՝ 077782955 կամ 028553783:

21.08.2023 / syuniacyerkir.am

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1040, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.09.2023թ.: